Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered charity No. 1173403

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILLINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 5th January 2026 Bulletin 03/2026

Christmas Eve

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՏՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:11-15

Քանի որ Աստուծոյ փրկարար շնորհքը երեւցաւ բոլոր մարդոց, կրթելով մեզ՝ որ ուրանանք ամբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները, եւ ապրինք խոհեմութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ՝ այս ներկայ աշխարհին մէջ, սպասելով այն երանելի յոյսին եւ մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին երեւումին: Ան ընծայեց ինքզինք մեզի համար, որպէսզի ազատագրէ մեզ ամէն անօրէնութենէ, եւ մաքրելով՝ ընէ իր սեփական ժողովուրդը, նախանձախնդիր բարի գործերու:

Ըսէ՛ այս բաները, յորդորէ՛ ու կշտամբէ՛ ամբողջ հեղինակութեամբ: Ո՛չ մէկը թող արհամարհէ քեզ:

The Epistle of St Paul to the Titus 2:11-15;

For the grace of God has appeared that offers salvation to all people. It teaches us to say "No" to ungodliness and worldly passions, and to live self-controlled, upright and godly lives in this present age, while we wait for the blessed hope—the appearing of the glory of our great God and Saviour, Jesus Christ, who gave himself for us to redeem us from all wickedness and to purify for himself a people that are his very own, eager to do what is good.

These, then, are the things you should teach. Encourage and rebuke with all authority. Do not let anyone despise you.

Register to become St Yeghiche Parish Member:

St Yeghiche Parish Council invites all members of United Kingdom Armenian Community to register and become a member of the our Parish and make St Yeghiche Armenian Church your spiritual home.

Your contribution to the Parish life, however small, enhance our community and make us stronger to help one another.

Kindly encourage members of the young generation to become involved with church life whether it is as servers on the Alter or with their angelic voices in the choir or with their IT knowledge in our communication field or organisational and/or culinary expertise with our Ladies Guild or Armenian Church Youth Organisation (ACYO), you are always welcomed to join and serve our Lord with the gifts He has blessed you with.

Please ask members of the Parish council at the church door for more details and or the form to register with the Parish. We look forward seeing you among our ranks.

St Yeghiche Armenian Church Parish Council

St Yeghiche Armenian Church Parish Council is pleased to announce that for 2026

The Godfather of the Cross for blessing of the water is

Mr Artur Tovmasyan

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 2:1-12

Երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհէմին մէջ՝ Հերովդէս թագաւորին օրերը, ահա՛ արեւելքէն մոգեր եկան Երուսաղէմ, եւ ըսին. «Ո՞ւր է ա՛ն՝ որ ծնաւ իբր Հրեաներուն թագաւորը. որովհետեւ մենք տեսանք անոր աստղը՝ արեւելքի մէջ, ու եկանք երկրպագելու անոր»: Երբ Հերովդէս թագաւորը լսեց՝ վրդովեցաւ, եւ իրեն հետ՝ ամբողջ Երուսաղէմը: Ապա, հաւաքելով բոլոր քահանայապետներն ու ժողովուրդին դպիրները, հարցափորձեց զանոնք թէ ո՛ւր պիտի ծնէր Քրիստոսը: Անոնք ալ ըսին իրեն. «Հրէաստանի Բեթլեհէմին մէջ: Որովհետեւ սա՛ գրուած է մարգարէին միջոցով.

"Դո՛ւն, Բեթլեհէ՛մ, Յուդայի՛ երկիր, Յուդայի կառավարիչներուն մէջ բնա՛ւ ամենափոքրը չես. որովհետեւ Կառավարիչ մը պիտի ելլէ քեզմէ, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը"»:

Այն ատեն Հերովդէս ծածկաբար կանչեց մոգերը, ստուգեց անոնցմէ աստղին երեւցած ժամանակը, եւ ղրկեց զանոնք Բեթլեհէմ՝ ըսելով. «Գացէ՛ք, ճշգրտութեա՛մբ տեղեկացէք մանուկին մասին, ու երբ գտնէք զայն՝ լո՛ւր բերէք ինծի, որպէսզի ե՛ս ալ երթամ՝ երկրպագեմ անոր»: Երբ անոնք թագաւորէն լսեցին այս խօսքը, մեկնեցան. եւ ահա՛ այն աստղը՝ որ տեսեր էին արեւելքի մէջ, կ'երթար անոնց առջեւէն՝ մինչեւ որ եկաւ ու կեցաւ մանուկին եղած տեղին վրայ: Երբ տեսան աստղը, չափազանց ուրախացան: Եւ տուն մտնելով՝ տեսան մանուկը, իր մօր՝ Մարիամի հետ. իյնալով երկրպագեցին անոր, ու բանալով իրենց զանձերը՝ մատուցանեցին անոր ընծաներ.- ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Ու երազի մէջ պատգամ ստանալով՝ որ չվերադառնան Հերովդէսի, ուրիշ ճամբայով մեկնեցան իրենց երկիրը:

Wise men following a shining star to Jesus

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 2:1-12

Visitors from the East

Jesus was born in Bethlehem in Judea, during the reign of King Herod. About that time some wise men from eastern lands arrived in Jerusalem, asking, "Where is the newborn king of the Jews? We saw his star as it rose, and we have come to worship him."

King Herod was deeply disturbed when he heard this, as was everyone in Jerusalem. He called a meeting of the leading priests and teachers of religious law and asked, "Where is the Messiah supposed to be born?"

"In Bethlehem in Judea," they said, "for this is what the prophet wrote: 'And you, O Bethlehem in the land of Judah, are not least among the ruling cities of Judah, for a ruler will come from you who will be the shepherd for my people Israel.'"

Then Herod called for a private meeting with the wise men, and he learned from them the time when the star first appeared. Then he told them, "Go to Bethlehem and search carefully for the child. And when you find him, come back and tell me so that I can go and worship him, too!"

After this interview the wise men went their way. And the star they had seen in the east guided them to Bethlehem. It went ahead of them and stopped over the place where the child was.

When they saw the star, they were filled with joy! They entered the house and saw the child with his mother, Mary, and they bowed down and worshiped him. Then they opened their treasure chests and gave him gifts of gold, frankincense, and myrrh.

When it was time to leave, they returned to their own country by another route, for God had warned them in a dream not to return to Herod.

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

Սուրբ ծննդյան Ճրագալույցի Սբ.Պատարագ

Ճրագալույցի Սուրբ Պատարագ տարվա ընթացքում մատուցվում է երկու անգամ՝ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոներին: Ըստ Հայ եկեղեցու՝ Սուրբ Ծննդյանը նախորդող մեկ շաբաթը պահոց շրջան է: Դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ի երեկոյան մարդիկ պահք են պահում: Այդ ընթացքում օգտագործվում է բացառապես բուսական ծագում ունեցող սնունդ: Սուրբ Ծննդյան տոնը սկսվում է հունվարի 5-ի երեկոյան և շարունակվում կեսգիշերից հետո:

Հունվարի 5-ի երեկոյան բոլոր եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Սուրբ Պատարագ: «Ճրագալույց» նշանակում է ճրագ՝ մոմ, վառել (լուցանել): Այդ օրը երեկոյան, մարդիկ եկեղեցում վառած ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույսն ու օրհնությունը:

Ճրագալույցը խորհրդանշում է նաև բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոգերին դեպի Հիսուս Մանուկը:

Eve of Feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ, Candlelight (Lucernarium) Divine Liturgy

As according to the Church the day is changed at 17:00 p.m., after the evening service, the feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ starts on the eve, in the evening of January 5, and is continued after the midnight, on January 6. On the eve a solemn Candlelight Divine Liturgy is celebrated. Following the conclusion of the Liturgy, the assembled faithful take lit candles and lamps home symbolizing the divine light and the blessing of the Church.

Lighting lamps symbolizes the light of the Bethlehem Star which guided the way of the magi to the baby Christ.

Dear Parishioners
and
Armenian Community Members

St Yeghiche Armenian Church, has published its 2026 wall calendar, with both Armenian Religious Feast dates and U.K. holiday dates.

These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday 30th November, 2025 and till stock lasts.

We encourage every Armenian household to have one, and bring our Lords blessing to your home and family.

Thank you for your support

St Yeghiche Armenian Church Parish Council

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

«Այսօր սուրբ Կոյսն անապական, աւետիս.

Ծնաւ երեր զանմահ Արքայն, աւետիս» (Շարակնոց, Ծննդեան կանոն):

Սուրբ Ծննդեանն սպասող եւ այժմ հրեշտակներին ուրախակից հարազատնե՛ր,

Մենք բոլորս ծնունդով ենք այս աշխարհ եկել, ծննդեան օրից է մեր կեանքը այս աշխարհում հաշուառուել: Բեթղեհէմի քարայրի մէջ պարզ, բայց սուրբ աղջնակի ծննդաբերութիւնը սովորական չէր, հրաշալի էր, երկնքի եւ երկրի վրայ փոփոխութիւն բերող էր, քանի որ Ծնուողը արտասովոր Մէկն էր: Դա հասկացան ժամանակի ընթացքում՝ նորածին Մանկան մէջ աշխարհի Փրկչին ճանաչելով, Իր ծնունդը սուրբ կոչելով եւ մարդկութեան Նոր թուականութեան սկիզբ դնելով: Թերեւս կարող ենք ասել, որ այս երկու հազար տարին շարունակական բացայայտումն է Նորածնի՝ հասկանալու համար, թէ ինչպիսի փոփոխութիւն բերեց եւ դեռ բերելու է մարդացած Աստուած՝ Յիսուս Քրիստոս:

Մեր Հայրենիքն ու ժողովուրդն էլ այս փոփոխութեանն ընդառաջ գնացող, ընդունող ու վկայողը եղան՝ Թադէոս եւ Բարդուղիմէոս սուրբ առաքեալներից լսածը նախ փոքր խմբերով տարածելով ու ապրելով: Ապա Աւետարանի խօսքով հոգիներ լուսաւորող սուրբ Գրիգոր հայրապետով ամբողջ Հայոց ազգը այս հոգեւոր ուրախութեանն ու վերափոխմանը մասնակից եղաւ: Ժամանակների փորձութեան մէջ Քրիստոսի սիրոյ եւ մահուան յաղթանակի հաւատքն օգնեց մեզ, որ վերածնուենք՝ Փրկչի հրաշալի Սուրբ Ծնունդը մեր մէջ շարունակելով իւրովի: Երկնքից իջած հրեշտակների փոխարէն շատերը մեզնից հրեշտակացան այս վկայութեամբ՝ մինչեւ մահ հաւատարմութիւն պահելով սուրբ Աւազանից իրենց սուրբ ծնունդին:

Ի՞նչ պէտք է անենք մենք՝ նոր միջավայրում, նոր ժամանակներում եւ նոր մարտահրաւէրների մէջ ապրող քրիստոնեայ մեր սերունդը. գործածել մեր հայրերի հաւատքը եւ ոգին՝ վերածնունդի բանալին կրկին փոխանցելով նոր սերունդին: Դա Աստծոյ բուժող սիրոյ մասին պատմելն ու Քրիստոսի խօսքերով բարոյական զաւակներ դաստիարակելու ճանապարհն է, դժուարութիւնների եւ նոյնիսկ մահուան դէմ յաղթական կանգնելու օրինակ տալն է, գործնականօրէն Քրիստոսի հետեւորդ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ լինելն է: Մեր ապագան մեր մանուկներն են, որոնք աւելի հարազատ կարող են ընդունել Մանուկ Փրկչին եւ Նրա հետ մարմնով աճել՝ հաւատքի ու սիրոյ պատուիրանով զօրանալով ու զօրացնելով: Սուրբ Ծնունդով կարող է վերսկսուել Հայոց վերածննդի թուագրութիւնը՝ մաքրելով մեր միտքն ու տեսադաշտը պառակտում բերող, իրար թշնամացնող երեւոյթներից: Քրիստոնէական սիրով, կենցաղով, մշակոյթով, գրականութեամբ, հոգեւոր ու ազգային կեանքի շինարարութեամբ վերադարձնելով սերունդին այն հոգեւոր աքսորից, ուր տիրում է անսիրութիւնը, նիւթապաշտութիւնը, ես-ի ու հաճոյքի պաշտամունքը:

Հոգեւոր կուռքերից հրաժարուելով ընդունենք աշխարհի եւ մեր Փրկչին մեր անձի, մեր ընտանիքի եւ ազգի հոգեւոր մսուրում, մեր սրտերը մաքրենք՝ Աստծուն եւ հաւատքը անարգով մտքերի, խօսքերի ու կենցաղի համար զղջումով, ապաշխարութեամբ: Այս օրը ծնուեց Փրկիչը, Օծեալ Թագաւորը, որ խաւարից դէպի լոյս, մահուանից կեանք բերեց մեզ՝ տալով մահուանը յաղթելու կարողութիւնը: Մենք էլ լսենք եւ քաջալերուենք հրեշտակների աւետիսով. ***«Մի՛ վախեցէք, որովհետեւ ահա ձեզ մեծ ուրախութիւն եմ աւետում, որը ամբողջ ժողովրդինը կը լինի»*** (Ղուկ. 2:10) եւ ջանանք, որ իսկապես մեր ամբողջ ժողովրդինը լինի այս մեծ ուրախութիւնը:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ

Մեզ եւ Ձեզ մեծ Աւետիս:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

St Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered Charity No 1173403

St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB

t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

New Year and Christmas at St Yeghiche Armenian Church
ՍԲ. ԵՂԻՇԷ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
ՍԲ.ԾՆՆԴԵԱՆ
2026

Christmas Week / Սբ.Ծննդեան պահք՝ դեկտ. 30-ից հունուար 5

Sunday 21st December 2025 — 11:00 Divine Liturgy / Սբ. Պատարագ

Sunday 28th December 2025 — 11.:00 Divine Liturgy / Սբ. Պատարագ

New Year / Նոր Տարի

Thursday 1st January 2026 — 11:00 Divine Liturgy and blessing of Pomegranates./Սբ. Պատարագ եւ Նռնօրհնէք

New Sunday/Նոր Կիրակի

Sunday 4th January 2026 — 11:00 Divine Liturgy / Սբ. Պատարագ

Jerakaloutz/ Ճրագալոյց, Christmas Eve Prayers

Monday 5th January 2026 — No Morning Service
15:00 Scripture readings / Ճաշու ընթերցումներ
16:30 Christmas Eve Eucharist and Holy Communion / Սբ. Ծննդեան Ճրագալոյցի Սբ. Պատարագ
18:30 Blessing of home / Տնօրհնէք

Theophany and Epiphany/ ՍԲ ԾՆՈՒՆԴ Ե ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Tuesday 6th January 2026 — 11:00 Episcopal Divine Liturgy followed by Blessing of the Water
/Առաջնորդական Սբ. Պատարագ, Ջրօրհնէք
(Պատարագիչ՝ Գերշ.տ. Յովակիմ եպս Մանուկեան)

Blessing of the Graves

Wednesday 7th January 2026 — 11:00 – 2:00 Rev Fr Nshan will be available at Gunners bury Cemetery to conduct individual prayers.
If you require at any other cemetery, please contact us to arrange with the Clergy Visiting the Cemetery.

All faithful are invited and encouraged to join us with their prayers.
For enquiries please contact any member of the St Yeghiche Armenian Church Parish Council, manning the desk at the church entrance or visit www.styeghiche.org.uk

May the Joy and Peace of Christmas
be with you now
and throughout the coming year.

4: Special Announcements,

Parking Permits to park free of charge on Tuesday 6th January 2026

Dear St Yeghiche Armenian Church Parishioners and Community Members,

We are pleased to inform you that we have secured limited number of parking permits for Tuesday 6th January 2026 (Christmas Day), which will be issued on 1st come 1st served basis.

The permits which are valid between 10:00am and 2:30pm, can be obtained , on the day, from members of the Parish Council at the church entrance desk.

Details of where to park is written overleaf on the permits. *Thank you.*

ՏՕՆ
Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ 6 ՅՈՒՆՈՒԱՐ 2026

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Պիտի պատարագէ եւ պատշաճի քարոզէ թեմիս Առաջնորդ
ԳԵՐԾ Տ. ՅՈՎԱԿԻՄ ԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս Պատարագ Ժամը 11:00ին Քարոզ Ժամը 12:15ին Ջրօրհնէք Ժամը 1:00ին

Սիրով կը հրաւիրենք մեր բարեպաշտ հաւատացեալները
ներկայ գտնուելու Ս. եւ Անմահ Պատարագին եւ ունկնդրելու Սրբազան Հօր պատգամը:
Հովիւ եւ Հոգաբարձութիւն Ս. Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk